ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/51

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 08.07.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել 25.06.2019թ. թիվ 2 արձանագրության և 01.07.2019թ. թիվ 3 արձանագրության առաջին չափաբաժնի մասով

կայացված այն բոլոր կետերը, որը վերաբերվում է «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին և պայմանագիր կնքելու մասին որոշումը առաջին չափաբաժնի մասով:

Բողոքներ քննող անձի 08.07.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 12.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 12.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.07.2019թ.-ին:

1. <u>«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

««Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն ներկայացնում է բողոք ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված շինարարական աշխատանքների գնման «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման դեմ: Չնայած այն փաստին, որ նշված նախարարության փաստացի ֆունկցիաները հիմա կատարում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, սակայն քանի որ մրցույթը հայտարարել է ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, այդ պատճառով բողոքը ներկայացվում է այս կարգով:

Ինչպես արդեն նշել ենք հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» հրատապ բաց մրցույթ:

Մրցույթին առաջին չափաբաժնի համար մասնակցել է երկու կազմակերպություն, մեր՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ և «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ:

Հայտը կազմակերպության կողմից ներկայացվել է 16.04.2019թ.: Հայտի հետ միասին ներկայացվել է նաև 10.06.2019թ. տրված N G 3075 բանկային երաշխիք EA19/00114 համարով: Երաշխիքը գործում է մինչև 30.09.2019թ.:

Մրցույթային հանձնաժողովը կայացրել է որոշում, որը տեղի է ունեցել 25.06.2019թ., որում նշվել է, որ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին չի համապատասխանում «Մերձմոսկովյան» ԲԲԸ հայտը մասնավորապես. «Մերձմոսկովյան» ԲԲԸ կողմից ներկայացված 10.06.2019թ. N 3075 Երաշխիքում նշված է, որ երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 30.09.2019թ., ինչը չի համապատասխանում «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի

հրավերի 7-բաժնի 7.3 կետի պահանջներին, այն է հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օյւ:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անբավարար:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ մերժել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1 ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸին:

Նույն գնահատող հանձնաժողովը 01.07.2019թ. արձանագրությամբ որոշեց 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ ին և gnumner.am կայքում հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշում և սահմանել անգործության ժամկետ:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման.

32 կետի 1 ենթակետի համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակայւզն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

32 կետի 9 ենթակետի համաձայն եթե տվյալ ընթացակարգի շրջանակում կնքվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման.

32 կետի 18 ենթակետի համաձայն գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն

իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես է մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում,

45 կետի համաձայն եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում Լ նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եվ այսպես, կարծում ենք, որ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը չպետք է մերժեր այս հիմքով.

Հրավերով այո սահմանվել է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

«Մերձմոսկովյան» ԲԲԸ հայտը ներկայացրել է 14.06.2019թ իսկ երաշխիքը տրվել է 10.06.2019թ. և գործում է մինչև 30.09.2019թ.:

Այո, ստացվում է որ կազմակերպությունը ներկայացրել է հայտի ապահովում բանկային երաշխիք, որը գործում է 75 աշխատանքային օր: Բայց եթե փորձենք նայել այլ տեսանկյունից, ապա ստացվում է, որ ընդամենը 17 աշխատանքային օր անց արդեն մրցույթի գնահատման փուլը ավարտվել է, հաշվի առնելով նաև կասեցման ժամկետը, և սահմանվել է անգործությունը, որը 10 օրացուցային և մոտ 5 աշխատանքային օր հետո կավարտվի և դրանից հետո մոտ 15 աշխատանքային օրվա ընթացքում կկնքվի պայմանագիր: Ստացվում է որ բանկային երաշխիքի գործելու համար անհրաժեշտ եղավ 37 աշխատանքային օր, իսկ մենք ներկայացրել ենք 75 աշխատանքային օրվա համար:

Առաջին չափաբաժնին ներկայացել են երկու մասնակից, այսինքն հանձնաժողովը ինչքան էլ մաքսիմալ ժամկետում փորձի գնահատել հայտերը 75 աշխ. օրը բավարար է անգամ շատ է: Ստացվում է, որ պատվիրատու նախարարությունը այս դեպքում որևէ ռիսկ չի կարող կրել հայտի ապահովման գումարը խախտման դեպքում գանձելու ուղղությամբ: Ավելի այդ ոչ այնքան հինավոր մերժման հիմքում ՀՀ պետական բյուջեն կարող է կրել բավականին մեծ վնասներ, տարբերությունը մոտ 13 000 000 դրամ է կազմում: Միթե նախարարությունը տվյալ դեպքում պատրաստ է այդքան մեծ կորուստների, այն պարզ պատճառով, որ ինչ ոյ ձևական մի քանի օր կարճ է երաշխիդ, կարծում ենք ոչ: Հանձնաժողովը պետք է լավ ուսումնասիրեր այս ռիսկերը և կայացներ օբյեկտիվ որոշում:

Համոզված ենք, որ «Մերձմոսկովյան» ԲԲԸ հայտը մերժելու հիմքում դրված N 526-Ն որոշման 40 կետի 4 ենթակետի խախտում մեր կազմակերպություն թույլ չի տվել:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել 25.06.2019թ. թիվ 2 արձանագրության և 01.07.2019թ. թիվ 3 արձանագրության առաջին չափաբաժնի մասով կայացված այն բոլոր կետերը, որը վերաբերվում է «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին և պայմանագիր կնքելու մասին որոշումը առաջին չափաբաժնի մասով:

3. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.07.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնել է հետևյալը.

««Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Սույն թվականի հունիսի 15-ին «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել թվով 5 կազմակերպություններ, այդ թվում՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն:

Հիշյալ կազմակերպությունը հայտի ապահովումը ներկայացրել են բանկային երաշխիքի տեսքով (կցվում է), որում նշված է, որ երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 30.09.2019թ., ինչը չի համապատասխանում «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7-րդ բաժնի 7.3 կետի պահանջներին, այն է՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր , իսկ տվյալ դեպքում հայտի ապահովումը գործում է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 76 աշխատանքային օր:

«ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները մերժել է «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ Մրցույթի հրավերի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով և գնահատող հանձնաժողովը պահպանել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:»:

ՀՀ տարածքային կառավարման և եթակառուցվածքների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացվել է դիրքորոշում, որով հայտնել են հետևյալը.

«Ուսումնասիրելով «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացված բողոքը հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք հրատապ բաց մրցույթի դեպքում գումարային արտահայտությամբ կազմում են աչ ավել քան 90 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն հայտը ներկայացրել է 2019 թվականի հունիսի 15-ին, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բացի այդ հայտերը բացվել են 25.06.2019թ-ին, իսկ ամբողջ գնման ընթացակարգը ամփոփել է 02.07.2019թ-ին, այսինքն 02.07.2019թ-ից հաշված 10 օր անգործության ժամկետից հետո մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովման միջոցները այլևս կիրառելի չէին լինի և ենթակա կլինեին վերադարձման, իսկ այս դեպքում «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի երաշխիքը գործելու էր մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ, որի կբավարարեր ապահովելու Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հայտնում եմ նաև, որ վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակից «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի և «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ ՍՊԸ-ի գնային առաջարկների տարբերությունը կազմում է 12 800 000 ՀՀ դրամ:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված 10.06.2019թ. N G 3075 երաշխիքում նշված է, որ երաշխիքը ուժի մեջ է մտնում տրամաղրման պահից և գործում է մինչև 30.09.2019թ., ինչը չի համապատասխանում «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7-բաժնի 7.3 կետի պահանջներին, այն է՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Հանձնաժողովի 25.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված թիվ 2-րդ կետի «ա» ենթակետի որոշմամբ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անբավարար, և Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է մերժել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտը:

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին 14.06.2019թ. մասնակցության

հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 10.06.2019թ.-ին տրամադրված թիվ G 3075 բանկային երաշխիք, որի համաձայն՝ երաշխիքը գործում է մինչև 30.09.2019թ.-ը ներառյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ

գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով հայտի ապահովման շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անբավարար, և Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, 25.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է մերժել «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտը:

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-

ՀԲՄԱԾՁԲ-2019/10Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին 14.06.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից 10.06.2019թ.-ին տրամադրված թիվ G 3075 բանկային երաշխիք, որի համաձայն՝ երաշխիքը գործում է մինչև 30.09.2019թ.-ը ներառյալ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի Օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք հրատապ բաց մրցույթի դեպքում կազմում են ոչ ավել քան 90 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն հայտը ներկայացրել է 2019 թվականի հունիսի 14-ին, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների

մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Անդրադառնալով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության այն դիրքորոշմանը, որ Մրցույթի հրավերի օրինակելի ձևը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով և գնահատող հանձնաժողովը պահպանել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ՝

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս թույլ է տվել ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատված Մրցույթի հրավերի օրինակելի ձևի որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանություն՝ հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացված բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ» հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

- 25.06.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու ու մերժելու և «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

- 01.07.2019թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված «Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**